

Ն Ա Մ Ա Կ Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն Ի Ց

1900 թ. դեկտեմբ. 23-ին Քեչրան

Օգոստոսի 27-ին դուրս եկայ Բագուից, 27-ին հասայ Պարսկասանի առաջին ֆաղաբ—էն գելի: Բուսականութիւնը նոյն եւ գեղեցիկ է. պարտեզների ծառերի մեծ մասը նարնջի, փորթոգալի եւ լիմոնի է. անցնում ես պարսկական կեղտոտ նեղ փողոցներով, երկու կողմը նոյն ծառերից են ճկած. կատարեալ հակապակեր: Էն գելիում 20 տուն հայեր կան. ունեն մի փոքրիկ եկեղեցի եւ ուսումնարանի շէնք. այս քաղաքի մատուցած ծառայութիւնը չունենի բանալ դպրոց, որովհետեւ այդ 15—20 տուն հայերը միմեանց հետ այլ եւ այլ, մանաւանդ վաճառականական հաշիւների պատճառով այնքան էլ լաւ չեն: Ժողովի հրաւիրեցի, աշխատեցի մի համաձայնութեան բերել. քեզ խոստացան ուսուցիչ հրաւիրել, բայց այնքան էլ չեմ հաւատում. պարսկական ընդհանուր եւ ֆաղաբաւարութիւնն է եւ՝ ֆաղաբականութիւն—խոստանալ ու չը կատարել: Դժուար է լսել քո յայտնած կարծիքին մի հակառակ բան, ամենքն իսկոյն համաձայնում են. մի կողմից լքւում է «հրամանդ ինչպէս հրամայեցիք, կ'աշխատենք կատարել», միւս կողմից «հրամանդդ շնորհ բերելով, ամեն բան լաւ կը լինի» եւ այլն այսպիսի պարսկական հանդիսատեսութիւններ. բայց այդ խօսքերը մասամբ արդէն պիտի վկայեն, որ իրանք օչինչ չեն անի: Էնգելիից գնացի Ռաւես, որտեղ 100 տուն չափ հայեր կան. ունեն մի գեղեցիկ օրիորդաց դպրոց (Թումանեանց տան գործակատարն է շինել իր ծախումով) եւ մի տղայոց խարխուլ դպրոց: Ինչպէս Էնգելիում նոյնպէս եւ այստեղ շատ քաղաքի երեքփոխանական եւ հոգաբարձական հաշիւները չեն նայում. ամեն ոք ինքնագլուխ, ամենայն ինչ խառն ի խուռն: Ուսումնարաններում պատահական ուսուցիչներ են, որոնք ինչ ցանկանում են, այն էլ անում են. ոչ մի կողմից հսկողութիւն չը կայ:

Ռաւեսից Թեհրան գալիս մայ եւ Կագուի լին ֆաղաբ, որ նշանաւոր է մրգի եւ բրնձի արդիւնաբերութեամբ. կան 40 տուն

հայեր, ունեն եկեղեցի (աղօթասուն) եւ միգասեան ուսումնարան, օտակասանցի խաբէրայ բախտախնդիր մի ուսուցչով: Դա Թաւրի-զից գնալիս է եղել Ջուղա Առաջնորդի մօտ, որ իրան մի տեղ տալ՝ սոված չը մնալու համար. ուզեցել է քանակաւորեան տեղ գտնել. «մարդ չի դարձել, գոնէ քանակաւ դառնայ»: Ազգութեանցիք հանապարհին բռնում են եւ վարձում իբրեւ ուսուցիչ. այժմ պատիժ է դարձել: Ազգութեան երթադրում էի, քէ Թեհրանում մեր կրթական հաստատութիւնները գոնէ գոհացուցիչ կը լինեն. բայց դժբախտաբար սպասածիցս վատ էին: Այս քանի օրերս միայն սկսուեց դաստատութիւնը փոքր ինչ կանոնաւոր կերպով:

Հասարակական կեանքը Թեհրանում չափազանց բոլ է, բնդ-հանրապէս ազգային գործերով հետաքրքրուելը շուայութիւն է համարում. հասարակական գործերին մասնակցողները մի քանի հոգի են, այն էլ քերի կերպով: Ընդարձակ քաղերում միմեանցից հեռու ցրուած են հայերը. բնդհանուր ժողով գումարելիս մի 15—20 հոգի արդէն սովորական մեծ քիւ է կազմելիս եղել: Այն մի քանի անհասներն էլ, որոնք իրանց կրթուած են համարում, աշխատում են շարունակ դպրոցների կառավարութիւնն իրանց ձեռնում պահել, դրանք եւս իրանց վարմունքով նպաստում են անարբերութեան գորեղանալուն: Վեց տարու չափ է, որ այդ հոգաբարձութիւնը հաշիւ չի տուել ժողովրդին. երկու տարի առաջ Առաջնորդը յիշեցրել է. պատասխանել են, որ հաշիւ տալու հետ իրանք էլ հրաժարուելու են: Առաջնորդը վախեցել է եւ ձայնը կտրել: Բայց եւ այնպէս խոստացել են յունուարին տալ իրանց հաշիւը: Ահա անցնում է երրորդ յունուարը, սակայն հաշիւը դեռ պատրաստ չունեն: Դժբախտաբար կրթուածներն էլ են այսպիսի աղայական եւ բռնակալական ձգտումներով: Երեւի լրտել են եւ տեսել Պօլսոյ ազգային ժողովում մի քանի էֆենդիներին ու փաշաներին, որոնք իրանց հակաժողովրդական գործերով միայն զգուսնք են ազդում եւ հարուածներ տալիս մեր կեանքին:

Ընդհանրապէս յայտնի է, որ Պարսկաստանում հոգեւորականութեան ոյժը գորեղ է: Դեպի հայ հոգեւորականները եւս վերաբերում են յարգանքով եւ Առաջնորդին բնդունում են ազգապէտ, որ իրաւունք ունի խառնուելու ժառանգական, կրթակային, կալուածական եւ այլ գործերի մէջ՝ պաշտպանելով այս կամ այն հայի, համայնքի կամ հաստատութեան օգուտը. նոյն իսկ քանակաւ հետեւութեամբ ներկայանում է սաղա-զամին կամ նախարարներին այդպիսի դատեր պաշտպանելու համար. այն ինչ աշխարհականի համար դժուար է եւ մեծ կաշառ-ներ էլ պիտի տա մի որ եւ է գործ յաջողեցնելու համար: Դեպքեր են եղել, երբ պարսիկ մօլլաները (այս տարի Թեհրան) դիմել

են հայ ֆանանային, որ իրանց առաջ ընկնի, որպէսզի գնան այս կամ այն նախարարին բողոքելու, որովհետեւ իրանց կարող են դուրս վռնել եւ չընդունել:

Շաս ուրախալի է, որ հետզհետէ ռուսական ֆաղափականութեան ազդեցութիւնը այսեղ զօրեղանում է. Թեհրանում ամենաազդեցիկը ռուսաց դեսպանն է:

Էնգելիից մինչեւ Թեհրան նանապարհը ռուսաց ձեռքին է. նանապարհի հարկը ռուսաց պաշտօնեաներն են ստանում. Ղազուիինց Համադան նրանք պիտի անցկացնեն նանապարհը: Ապրանքների մեծ մասը Ռուսաստանից է. նոյն իսկ Զուլա են հասնում: Վանառականական յարաբերութիւնները օրեցօր չափազանց զօրեղանում են Թեհրանում. կան Մոսկուայի «միջազգային» կոչումած եւ ռուսաց պետական բանկերի նիւղեր. վերջինի նիւղերը մի քանի պարսկական ֆաղափներում մտարութիւն կայ մօտիկ ապագայում բանալու. ի միջի այլոց եւ Սպահանում: Թեհրանի ձիաբարձը Բելգիական ընկերութեան ձեռքին էր. հետզհետէ անցնում է ռուսաց ձեռքը. նոյնպէս եւ Պարսկաստանի միակ երկաթուղու գիծը Թեհրանից մինչեւ Շահարդուլագի միջոցանակով (10 վերսաչափ): Այս երեք տարի է, որ Իսպահանում հիմնուել է ռուսաց հիւպատոսարան: Այն կողմերը զօրեղ է անգլիական ազդեցութիւնը. անգլիներէնը շատ է տարածուած Զուլայի հայերի մէջ. այդ պատճառով շուղայեցի հայերից շատերը ծառայում են անգլիական հաստատութիւնների մէջ—բանկերում եւ հեռագրասերում: Պարսկաստանում կայ անգլիական բանկ, որ կոչւում է Imperiale Banque de Perse. ունի նիւղեր Թարիզում, Ռաշում, Ղազուինում, Շիրազում, Բուշիրում, Թեհրանում, Իսպահանում եւ այլն: Այս բանկը «Լիօնի վարկ» բանկի հետ յարաբերութիւն ունի. տալիս է 6%: Ռուսաստանը շատ լաւ մրցում է անգլիականի հետ. նոյնպէս տալիս է 6%:

Թեհրանում ապրուսը քանզ է. քե՛ հացը, քե՛ ջուրը եւ քե՛ օդը շատ վատ: Հացի գին բարձրացնելը արհեստական է, ինչպէս Պարսկաստանի այլ տեղերում եւս. մեծ կալուածատէրեր կան, որոնք 50—100 գիւղեր ունեն, ցորենն ամբարում են. գիւղացին էլ կեղեքումների շնորհիւ այնպէս ֆայտայում է տեսնապէս, որ իր չնչին աւելցած հացահատիկը (որ երբեմն է պատահում) չէ կարողանում կամ չէ համարձակուում բերել շուկայ եւ ծախել: Ցորենի գին որոշողները մի քանի մեծ կալուածատէրերն են: Պարսկաստանի ֆաղափների միջով երբ անցնում եւ կառնով, բազմաքիւ երեխաներ կիսամերկ, մարդիկ եւ կանայք ետեւից դընկած վազում են օգնութիւն խնդրելով. քե՛ աղֆատութիւնը եւ

քէ հարսուրիւնը ծայրայեղութեան է հասած: Հարուսների մանաւանդ պաշտօնեաների սները կահաւորուած են աւելի եւրոպական հաշակով—բանկագին բազկաթոռներ (ոսկեգօծ), սեղաններ. սեղ-սեղ սենում եւ եւ դաշնամուր, ի հարկէ շնորհի համար: Տեսնում եւս աբաները գցած դուռն են գալիս կառնքով. երբեմն էլ վեց ձի լծած. մի խօսով՝ փառաւերջութեան արտաքինը բաւականաչափ մուսք է գործել: Փրանսերենը շատ տարածուած է պարսիկների մէջ:

Լսել էի, որ կաշառակերութիւնը շատ է տարածուած, բայց չէի իմանում որ բոլորովին սրբագործուած մի սովորութիւն է. այստեղ մի տեսակ դաւանանքի կերպարան է ստացել: Երբ հորէն վարդապետը Զուղայի Ամենափրկչեան վանքի կալուածական մի դաս պաշտպանելու համար ներկայանում է արտաքին գործոց նախարարին եւ խօսակցութեան ժամանակ յայտնում, որ հակառակորդները շահի եղբօրը՝ Զիլի Սուլթանին կաշառքներ են տուել, արտաքին գործոց նախարարը ծայրով աւտում է՝ «այդ չէ՞ որ մեր մէջ դա (կաշառք) սովորութիւն է»: Կաշառքի փոխարէն մասին նախապէս համաձայնութիւն են կայացնում: Կաշառքի քոյլ աստիճանը—անամն է: Թագաւորի, նրա որդիների, նախարարի եւ այլ պաշտօնեաների մօտ գնալիս առաջովը գնում են Ֆառաշներ փայտեղ ձեռքերին. անպատշաճ նրանց մի փանի բուման պիտի տան. երբ ոչ հետեւեալ անգամ կամ մուսք չես ունենայ, կամ նամակդ չեն հասցնի եւ այլն: Բերում են նամակներ, հեռագիրներ, լրագիրներ երբ անամ (հա Կաշ) չես այլ՝ շարքներով չեն բերի. ո՞ւմ գանգատուես, փանի որ մեծերն էլ նման են ծառաներին: Երբ տես, այդ էլ ցաւ է, կը սկսեն ամեն or մի-մի հաս բերել, երբ նոյն իսկ չորս-հինգ նամակ կամ լրագիր միասին տարածուած լինեն: Կառներն այստեղ Բեյլ. Անոնիւմ ընկերութեանն է. պիտի ընկերութեան կայարանն ուղարկես մարդ որ կառն տան: Ընկերութեանը վնասելուց յետոյ, պիտի աւանտ տես իւրաքանչիւր անգամ կառապանին երկու, երբեմն էլ երեք դրան (40—50 կոպ.): Մի փան-երեսուն եւ հինգ տեղ այցելեցի. մի ամիս յետոյ տեսնեմ ընկերութիւնն ուղարկեց մի հաշիւ 24 բումանի (48 բուման չափ) բացի այն, որ կառապանին տուել էի իբրեւ անամ, ամեն անգամ երկու դրան: Աւելի ընդարձակ կը լինի միւս նամակս:

*